

ՆՈՐՕՐԵԱՅ ԽԵՂԿԱՏԱԿ «ՄԱՐԴԱՍԵՐ» ՄԸ ԵՒՍ՝ MATTHEW BRYZA

Posted on August 25, 2022 by Keghart



Category: [Opinions](#)



Դոկտ. Մինաս Գոճայեան, 15 Օգոստոս 2022, Լոս Անճելըս

Խորհրդածութեանս առի՞թը, խնդրեմ կարդալ սա տողերը:

"Integration of Armenians in Karabakh into the Azerbaijani society is the only humanitarian way forward, the former US ambassador to Azerbaijan, Matthew Bryza told [Trend](#)".

(Ղարաբաղի մէջ հայերու ընդելուզումը (իմա՝ ձուլումը, ամբողջին մաս կազմելը) Ատրպեճանի հասարակութեան մէջ միակ մարդասիրական ճանապարհն է, Trend-ին ըսած է Ատրպեճանի մէջ ԱՄՆ նախկին դեսպան Մեթիու Պրայզան:)

Այսպիսի առիթներով է որ հայկական առածը կ'ըսէ. «Աղուէսէն վկայութիւն ուզեցին՝ պոչը բերաւ»:

ԱՄՆ-ի լաւագոյն իրաւաբանական եւ քաղաքագիտութեանց հաստատութիւններ հետեւած այս «տոն ժուան» դիւանագետը կը կարծէ գտած ըլլալ Արցախի հայութեան բարօրութեան ու փրկութեան լաւագոյն բանալին, եւ հանդէս կու գայ վերոնշեալ յայտարարութեամբ: Շնորհակալութի՞ւն դիւանագիտական ասպարեզի «աղուէսին»: Իր անցեալը հարեւանցիօրէն ուսումնասիրողը պիտի չզարմանայ Մաթեոսի «աւետարանի» յայտարարութեան վրայ, որովհետեւ ուրիշ առիթներով համը առած է ան նավթատուլարի՝ իր երկրորդ ամուսնութեան առթիւ՝ Իսթամպուլի մէջ: Սա նաեւ ԱՄՆ-ի այն խորհրդականներէն էր Լեհաստանի մէջ, որ խորհուրդներ կու տար Solidarity շարժման: Կ'ընդունիմ որ միջակէն բարձր ամերիկացի մըն է, վասնզի կը խօսի ռուսերէն, լեհերէն, հաւանաբար նաեւ թուրքալեզուներէն:

Ուրեմն ԱՄՆ-ի այս «մարդասէ՛ր» դիւանագետը օգնելու **փորձ** ընելու փոխարէն ճիշդ հակառակը՝ մեր գլխուն **փորձանք** կ'ըլլայ:

Իմ նման Միջին Արեւելքի քաղաքական եւ ռազմական վերիվայրումներու մէջ ապրած մարդոց համար այսպիսիները կը նկատուին միջազգային սիոնիզմի եւ *Նավթատուլարածարաւներու* բանբերի տիպար օրինակներ: Հոսկէ ալ կը շարունակենք մեր մտորումները:

ա) Արդեօ՞ք Նոյն մարդասիրական (*հումանիտար*) խորհուրդը պիտի տար ուկրաինացիներուն՝ համախոհութեամբ ապրիլ Պուտինա-լավրովեան ՌԴ-ի հետ:

բ) Արդեօ՞ք Նոյն խրատը պիտի տար Կիպրոսի մէկ երրորդը զաւթած բայց բնակչութեան մէկ չորրորդը հանդիսացող թուրքերուն կամ յոյներուն պիտի առաջարկէ՞ր խաղաղութեամբ ու համակերպութեամբ ապրիլ երկիրը զաւթած Թուրքիոյ հանրապետութեան ուժերու հովանիին տակ:

գ) Հրեաները սիւս՞լ ըրին որ չմիաձուլուեցան սպանացիներու, փորթուկալցիներու, ֆրանսացիներու, արաբական երկիրներու եւ գերմանախօս ժողովուրդներու մէջ:

դ) Այս փողկապաւոր դիւանագետը որեւէ գաղափար ունի՞ կամ թէ գիտէ՞ ինչ կը նշանակէ **հայրենի պատմական հող**, թէ որքան կարելոր է **Նախնեաց հողերու եւ բնակարաններու** մէջ ապրիլ ու պահպանել **ազգային առանձնայատկութիւններն ու ինքնութիւնը**, թէ՞ իր համար նշանակութիւն չունի թէ ԱՄՆ-ի ո՞ր նահանգին մէջ ապրեր է, Թեքսաս թէ՞ Ալաբա, քանի որ տեղաբնիկի գիտակցութիւն չունի ինք, այսօր Այովա, վաղը՝ Արիզոնա:

Դիւրին է խորհուրդ տալը, մանաւանդ մեր պարագային մէջ գտնուող ազգի մը, երբ ռուս-թուրք-ազերի/թաթար եռեակին կողմէ բժախնդորէն հաւաքագրուած եւ մամոնային ծախուած օլիգարխներ, յաջողեցան պարտութեան մատնել 1990-ականներուն պատուաբեր յաղթանակ տարած մեր ազգին: Դիւրին է խորհուրդ տալ եւ ըսել. «Եթէ այս թաղը չես հաւնիր, գնայ միւս թաղը ապրիր...»: Պրայզաներուն համար ամէն տեղ հայրենիք է, ուր փողը առատօրէն կը հոսի, իրենց համար հայրենիք է Պաքուն, Փարիզը, Նիւ Եորքը, Իսթամպուլը, վաղը՝ Քապուլը...: Ինչ կայ որ:

Հիմա մեր ականաւոր թղթակիցներէն մէկը սինիզմի պատգամաբերներուն հարց կու տայ.

-Ի միջի այլոց ինչու՞ Եգիպտոսի, Իրաքի, Եմենի, Մարոկի հրեաները բնակություն կը հաստատեն պատերազմէն աւերված երկրի մէջ, փոխանակ ծուլուելու այն երկրներու մէջ, ուր իրենք ծնած էին և ուր դարեր շարունակ շատ լաւ յաջողութիւններ ունէին...: (Ժ. Թ.)

Հետեւեալ դրուագները Մ. Պրայզայի կեանքէն ցոյց կու տան ինչպիսի՞ դիւանագետի հետ գործ ունի ՀՀ-ն եւ առհասարակ հայ ժողովուրդը:

ա) Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ԵԱՀԿ (OSCE) Մինսքի խումբին բանակցային գործընթացին ընթացքին Մ. Պրայզայի **աննպաստ եւ կողմնակալ արտայայտութիւններուն** առթիւ «Հայ Դատի» ատենապետ Քեն Հաչիքեան բողոքի նամակով մը դիմեց Պետ Քարտուղարուհի Հիլըրի Բլինթընին:

բ) 2012-ին ԱՄՆ-ի Ծերակոյտը (Սենատը) **չվաւերացուց** Մ. Պրայզայի նշանակումը իր հայցած պաշտօնին արտաքին գործերու նախարարութենէն ներս: Իր նշանակումին դեմ խստօրէն արգելք կեցան հայկական լոպիստական կազմակերպութիւններ եւ **այլ ծերակուտականներ**՝ իր բացայայտ ատրպէյնանամետ կողմնորոշումներուն եւ Ատրպէյնանի կարգ մը պետական այրերու հետ ունեցած **հարցական կապերու** պատճառով:

գ) Պրայզայի երկրորդ ամուսնութեան առթիւ (թուրք Չէյնօ Պարանի հետ-կասկածելի ծագումով կին մը) Ատրպէյնանի Տնտեսական զարգացման նախարար Հէյտար Պապաեւ նշանակալի **քարիւղահամ** գումար մը «նուիրած է» Իսթամպուլի մէջ կայացած հարսանեաց հանդէսին:

ԱՄՆ-ի եւ զինակից երկիրներու մէջ ապրող, բարգաւաճող եւ ընտրական որոշ ձայն ունեցող մեր հայրենակիցներուն եւ մեր ոչ-հայ բարեկամներուն կը մնայ աչալրջօրէն հետեւիլ իրենց երկիրներու մէջ գտնուող եւ զանազան տիտղոսներ ու հանգամանքներ ունեցող պրայզաներուն, որպէսզի դիմակազերծուին յաջս իրենց ապրած երկիրներու մարդասեր ու ժողովրդավար հոսանքներու: (Այսքանը կարծեմ կրնանք ընել, մանաւանդ այն «ուժերը», որոնք իրենց քիթը կը մտցնեն ՀՀ-ի գործերուն մէջ:)

Հետաքրքրական պիտի ըլլար իմանալ թէ ի՞նչ պիտի ըսեր ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնը Մ. Պրայզային, եթէ հրաշքով մը յայտնուէր այս օրերուն...



There are no comments yet.